

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлясь. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուած.

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաւարտիւր բառին 2 կոպեկ.

NIEN 7/2
62
BES
15.
9-1

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապօրինի վարձուք. Հակակոտորական տարր.
—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էլի մի փաստ. Նամակ
կազմակերպ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Երազմանական և չինական գործերը. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՎԻՐ-
ՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Անթրոպոլոգիայի ժողով ինստիտուտում

ԱՊՈՐԻՆԻ ՎԱՐՄՈՒՆԵՐ

Երկար տարիներից ի վեր, թէ այն ժա-
մանակ, երբ թիւրքաց հայերի սահմանա-
դրութիւնը de facto գոյութիւն ունէր, և
թէ վերջին տարիներս, երբ տխրահռչակ
Աղբակների շնորհով, սահմանադրութիւնը
միայն անունով գոյութիւն ունէր,—կենտ-
րոնական վարչութեան ոչ մի մարմինը, ոչ
քաղաքական ժողովը, ոչ կրօնական ժողովը
և ոչ էլ վերջապէս այդ երկու ժողովներից
բաղկացած խառն ժողովը իրան թոյլ չէր
տուել անել մի այնպիսի ապօրինի, հակա-
սահմանադրական և նոյն իսկ անմիտ քայլ,
ինչպիսին արեց վերջին օրերս խառն ժո-
ղովը:

Խառն ժողովը, ինչպէս հաղորդում է Կ.
Պօլսի մեր թղթակիցը, հակառակ սահմա-
նադրութեան, հակառակ իր լիազօրութեան,
թոյլ տուեց իրան ձեռնարկել տեղապահի
ընտրութեան, ընտրելով այդ պաշտօնի հա-
մար Գիմարեանի եպիսկոպոսին:

Մեզ չէ հետաքրքրում ընտրվածի, Գի-
մարեանի եպիսկոպոսի, անձնաւորութիւնը:
Եթէ այդ ընտրվածը լինէր ոչ թէ Գիմարե-

ան, այլ նոյն իսկ մի համակրելի և
շատ լաւ մարդ, մենք, այնու ամե-
նայնիս, կը բողոքէինք այդ ընտրու-
թեան դէմ, որովհետեւ իր արած ան-
միտ քայլով խառն ժողովը մի նոր հա-
րուած տուեց սահմանադրութեան, աւե-
լորդ դարձնելով Աղբակի ժողովի գումար-
ման հարցը:

Մենք ասել ենք մի քանի անգամ և էլ
կրկնում ենք.—պատրիարքի ընտրութեան
համար պէտք է անպատճառ գումարվէր Աղ-
բակի ժողովը, որը Աղբակների շնորհիւ, մի
քանի տարի է արդէն գոյութիւն չունի:
Խառն ժողովի ձեռքով տեղապահի ընտ-
րութիւն կատարելը մի կողմնակի միջոց
է, որով թաղվեց Աղբակի ժողովը գումար-
ակաւ միտքը, խախտելով թիւրքահայոց
սահմանադրութեան հիմնական կէտը:

Յաւայի է, ձգմարիտ, որ խառն ժողովի
հոգեւորական և աշխարհական անդամները
քաջութիւն չունեցան մի փոքր անկախ, մի
փոքր անվեհեր լինելու, քաջութիւն չու-
նեցան մնալու սահմանադրութեան շրջա-
նակների մէջ, քաջութիւն չունեցան իրա-
դրձելու այն պարզ միտքը, որ իրանք իրա-
ւունք չունեն ընտրութիւն կատարելու, և
ամօթ է իրանց անուան և իրանց պատի
համար մի այդպիսի ապօրինի քայլ անելը:

Այդ վախկոտ, քաղաքացիական քաջու-
թիւնից զուրկ մարդիկ ոչ թէ միայն չը
պահպանեցին սահմանադրութեան պատի-
ւը, ոչ թէ միայն չը նպաստեցին Աղբակի
ժողովի գումարման, այլ այնքան անընդու-
նակ գտնվեցան, որ մոռացան, թէ անկա-
րելի է 10 ձայնով ընտրութիւն անել:

Եւ ձգմարիտ: Խառն ժողովի անդամների

թիւը 28 է, 14 աշխարհական և 14 հո-
գեւորական: Արդ, ամենապարզ լոգիկան պա-
հանջում է, որ ընտրութեանը մասնակցէր
գէթ անդամների մեծամասնութիւնը, կէսից
աւելին, իսկ ընտրվածը ստանար եթէ ոչ
բացարձակ մեծամասնութիւն, գէթ կէսից
աւելի: Մինչդեռ ժողովին մասնակցել են
միայն 14 հոգի, այն է բոլոր անդամնե-
րի կէսը, իսկ Գիմարեանի ստացել է կէսից
էլ պակաս, այն է 10 ձայն:

Եւ միայն Կ. Պօլսի վարձկան Էֆէնդինե-
րը և կամ խառն ժողովի վախկոտ, ստորա-
քարէ անդամները կարող են կարծել, թէ
կարելի է ազգի ներկայացուցիչներ համար-
վել, ազգի անունից ընտրութիւն անել մի
այնպիսի ժողովում, ուր անդամների հազիւ
կէսն է ներկայ, և ուր ընտրվածը կէսից
էլ պակաս ձայն է ստանում: Այո, այս-
պիսի քաջագործութեան միայն վարձկան
մարդիկ են ընդունակ:

Ոչ ոք, ոչ խառն ժողովի անդամները,
ոչ Գիմարեանի եպիսկոպոսը, և ոչ նրանց
կրկնելի և աներեւոյթ խորհրդականները
այնքան քաղաքացիական քաջութիւն, այն-
քան պատուաւիրութիւն չունեցան, որ յետ
կանգնեն իրանց արած ապօրինի, անմիտ
քայլից, քանի դեռ ուղի չէ, քանի դեռ ժա-
մանակ կայ յանցանքը քաւելու:

Ընդհակառակ, խառն ժողովի անդամները
զուրկ գտն էլ լինեն, որ կարողացան «ազգը
վտանգից ազատել», իսկ Գիմարեանին էլ
անկապաւ, մի քանի եղբայրական համա-
տութիւններ անելուց յետոյ, կը ստանան
տեղապահի պաշտօնը, և ուղի գտն, կը
ձգտի ձեռք բերելու պատրիարքի պաշտօ-
նը, ի հարկէ, նոյն ծուռ ու մեռ, նոյն

ապօրինի ճանապարհով, ինչ ճանապարհով
ձեռք բերեց տեղապահի պաշտօնը:

ՀԱԿԱԿՈՒՆՈՒԹԻՒՆ ՏԱՐԻ

Կովկասում մինչև այժմ գոյութիւն ունի
թափառականութեան այն ձևը, որ կրում
է իր մէջ հակաքաղաքակրթական, հակա-
կոտորական բնաւորութիւն: Գոյութիւն
ունեն ամբողջ համայնքներ, ամբողջ շրջեր,
որոնք վարում են թափառական կեանք, տե-
ղափոխվելով անդադար մի տեղից դէպի միւսը
և որոնք դեռ դաւանում են այն համոզ-
մունքը, թէ գոյութիւնը—վարպետութիւն
է, սպանութիւնը—համարձակութիւն, իսկ
աւագակութիւնը—քաջութիւն:

Այդպէս են քրեւդները, այդպէս են Մու-
ղանի, Միլի, Կարայաղլի թափառականնե-
րը: Կրանց համար քաղաքակրթական կեան-
քի բարքերը օտարոտի են, զրանք չեն
հասկանում աշխատանքի և արդար մշա-
կութեան վրա հիմնված կեանքը, զրանք
միայն խոնարհվում են ոյժի առաջ, անկա-
րելիութեան առաջ:

Նոյն իսկ մեր երկրի ժողովրդի մի ստուար
մասը, որը արդէն թողել է թափառական
կեանքը, դեռ ապրում է այն հասկացողու-
թիւններով, որոնք յատուկ են թափառական-
ներին: Նա հեռեւանք է մտածում և այն
պատերազմական ոգուն, որ գոյութիւն ու-
նէր միմեանցից բաժանված, միմեանց թըշ-
նամի կովկասեան ազգերի մէջ:

Թափառականների գոյութիւնը մեր երկ-
րում շատ վնասում է երկրի տնտեսական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԹՐՈՊՈԼՈԳԻԱԿԱՆ ԺՈՂՈՎ. ԻՆՍՏԻԿՈՒՆ

Օգոստոսի 10 ին հասաւ ինստիտուտի Գեղե-
ցիկ Տիւրի այդ գեղեցիկ մայրաքաղաքը շին-
ված է իղէլ գետի ափին, և իր գիրքով մասամբ
յիշեցնում է Թիֆլիսը. երեք կողմից շրջապատ-
ված բաւական բարձր, մինչև օյժմ դեռ իրանց
ձորերում ձիւն պարուհակող լեռներով: Զորորդ
կողմից տարածված է իղէլի հովիտը, որի վրա և
քաղաքն է: Այդ ամբողջ հովիտը նման է մի ըն-
դարձակ կանաչ գոգի, ուր գրված են մարդկանց
ընկալմանները, պարզ, բայց բնորոշ ճաշակով կա-
ռուցված վիլանները, իսկ լեռների ամբողջ փե-
շերը ծածկված են խիտ, կանաչազգեստ անտառ-
ներով: Միայն առանձին գագաթներն են հսկաների
պէս միանգամայն մերկ օւրուականների պէս վերն
բարձրանում, որով ընդհանուր տպաւորութիւնը
վեհ և սքանչելի է:

Այս ամա քաղաքում են ներկայումս տեղի ու-
նենում գերմանա-աւստրիական անթրոպոլոգիների
միացեալ (իբրև միացած ժողով սա երկրորդն է
համարվում) ընդհանուր ժողովը, որը 25 տարի
առաջ հիմնվելուց ի վեր կրկնվել է կանոնաւո-
րապէս իւրաքանչիւր տարի, երկրի զանազան քա-
ղաքներում:

Գուցէ «Մշակի» ընթերցողներից շատերին այդ
հետաքրքրական գիտութեան միայն անունն է
յայտնի, առանց բովանդակութեանը. ուստի մենք
խօսք ենք տալիս թարգմանելով հրատարակել
վիրթովի առաջին նիստին խօսած ճառը, որը հա-
մառատապէս բացատրում է այդ գիտութեան էու-
թիւնը և նրա առաւելագոյն զարգացումը, իսկ
այժմ բաւականանալով հետեւեալ երկու խօսքերով:

Անթրոպոլոգիան, կամ ինչպէս հայերս
ենք թարգմանում՝ մարդաբանութիւնը այն
գիտութիւնն է, որ պարապում է գիտաւորապէս
որոշելու զանազան ազգերի, ցեղերի բնական ա-

ռանձնայատկութիւնները, հիմնվելով արտաքին
տեսքի, գանգի ձևի, կմաղքի կազմութեան, ան-
դամների համաչափութեան, կառուի գոյնի, մաղե-
րի յատկութեան, աչքի գոյնի վրա, որոշում է
մարդու բնաւորութեան բնորոշիչ գծերը, հետա-
մուտ է իմանալ մարդու ծագման ժամանա-
կը, նրա կապը կենդանիների հետ և այլն: Այս
նպատակին հասնելու համար այդ գիտաւոր գիտու-
թեանը օժանդակում են մի շարք երկրորդական
գիտութիւններ:

Ժողովի տեղը շատ յարմար է՝ Գերմանիայի և
Աւստրիայի սահմանների մօտ, տարվալ ամենա-
յարմար ժամանակը, երբ գիտնական աշխարհը
պաշտօնական պարագմունքներից ազատ է, ուս-
տի և յոյս կար, որ շատ բազմամարդ կը լինի:

Ամսիս 11-ին, երեկոյեան ժամի 8-ին, ըստ ծը-
րագրի կապեցաւ հիւրերի ընդունելութիւնը քա-
ղաքային փառահեղ դահլիճում: Այդտեղ հիւրերը
յարմար ժամանակը, երբ գիտնական աշխարհը
պաշտօնական պարագմունքներից ազատ է, ուս-
տի և յոյս կար, որ շատ բազմամարդ կը լինի:
Ամսիս 11-ին, երեկոյեան ժամի 8-ին, ըստ ծը-
րագրի կապեցաւ հիւրերի ընդունելութիւնը քա-
ղաքային փառահեղ դահլիճում: Այդտեղ հիւրերը
յարմար ժամանակը, երբ գիտնական աշխարհը
պաշտօնական պարագմունքներից ազատ է, ուս-
տի և յոյս կար, որ շատ բազմամարդ կը լինի:
Ամսիս 11-ին, երեկոյեան ժամի 8-ին, ըստ ծը-
րագրի կապեցաւ հիւրերի ընդունելութիւնը քա-
ղաքային փառահեղ դահլիճում: Այդտեղ հիւրերը
յարմար ժամանակը, երբ գիտնական աշխարհը
պաշտօնական պարագմունքներից ազատ է, ուս-
տի և յոյս կար, որ շատ բազմամարդ կը լինի:

Այդ պատկերը փոխվեց, երբ դահլիճ մտաւ
վիրթովը, որին ամենք սպասում էին, ամեն ան-
կրկնեցից շտապեցին ներկայանալ գիտութեան
այդ մեծանուն, թո՛ւք անունները, որի խօսքը երկար տարիների
ընթացքում ամենամեծ նշանակութիւնն է ունե-
ցել: Բայց ծերութիւնը ամենամեծ մարդու գործու-

նէութեանն էլ սահման է դնում: Երբեմն, երբ ընդ-
հանուր սեղանի վրա համախմբվում են իրար ծա-
նօթ անձինք և խօսք է բացվում վիրթովի մասին,
այն ժամանակ նկատելի է լինում պարզ, որ նո-
րերի յարգանքը դէպի վիրթով գիտութեան արդէն
մատուցած նրա ծառայութեան համար է, և որ
նրանից նոր բան այլ ևս չեն սպասում: Նրա
հետ ծանօթ լինելը, նրանից խօսք լսելը շատերի
համար մեծ պատիւ է համարվում. ինձ էլ նոյն
երեկոյեան ներկայացրին հուշկաւոր գիտնականին
և նա իմանալով իմ հայ լինելը, ասաց, որ Հա-
յաստանի վրա, իբրեւ բազմակողմանի հետաքր-
քութիւն ներկայացնող երկի վրա, մեծ ուղարու-
թիւն է դարձնում և մտադիր է միւս տարի Լիմա-
նին և Բեռլին ուղարկել այնտեղ երկրորդ հետա-
գոտելու:

Բոլոր հանգիստականների թիւը հասնում էր մօտ
երեք հարիւրի. ոմանք մնացին դահլիճում մինչև
ժամի 11, ոմանք սակի երկուսը: Ընդհանուր ճառերը,
բարի գալուստ մաղթելը վերապահված էին հետե-
ւեալ օրվա համար: Այդ երեկոյեան խօսեց քա-
ղաքի կողմից միայն պրոֆեսոր Վիդերը, յայտ-
նելով որ ինստիտուտը քաղաքը իրան երջանիկ է ըզ-
դում, որ կարողանում է իր յարկի տակ այդպի-
սի մի մեծ նպատակի համար հիւրասիրել Գերմա-
նիայից, Աւստրիայից և հեռու երկրներից եկող
հիւրերին, որոնց նա յանուն քաղաքի ողջունեց,
յայտնելով որ եթէ քաղաքի ցոյց տուած ընդու-
նելութեան մէջ չի լինի այն քեքութիւնը, փա-
թամութիւնը, որ սովորական է մայրաքաղաքնե-
րին, դրա փոխարէն այդ հիւրասիրութիւնը կը
լինի արտալից և անկեղծ:

Բուն ժողովը բացվեց օգոստոսի 12-ին առա-
ւօտեան: Քաղաքային դահլիճի մէջ, կանաչ սե-
ղանի շուրջը հաւաքված էին ժողովի կարգադ-
րիչները, մասնակցողները կրծքերին ունէին վար-
դանման նշաններ. սովորական ողջոյններ և բարե-
մաղթութիւններ յայտնեցին կառավարութեան
ներկայացուցիչ պրոֆեսոր Մերկլից: Տիւրի կողմից
պրոֆեսոր Բրանդէս. քաղաքի և համալսարանի
կողմից՝ քաղաքագլուխը և ընկալոր:

Այս վիրթովը երկար ճառով բացատրեց անթ-
րոպոլոգիայի նպատակը, նրա բուն ձգտը
միւս գիտութիւնների շրջանում, նրա արած ա-
ռաջադիմութիւնը: Այդ մասին մենք յետոյ կը
խօսենք:

Գլխաւոր նպատակը այդ օրվա նիստի այն էր,
որ հանդիսատեսներին ցոյց տրվի, թէ անթ-
րոպոլոգիան ինչ առաջադիմութիւն է արել յատ-
կապէս Տիւրում: Տիւրում և անթրոպոլոգիա-
րի շրջաններում յայտնի երկու պրոֆեսորներ՝
Վիլիլեր և Տօլդ, երկու ժամ խօսելով պարզեցին
թէ ինչպիսի փայլուն առաջադիմութեամբ և միշտ
աջող եռանդով տեղական գիտնականները աշխա-
տել են երկրի անթրոպոլոգիական հետազոտու-
թեան համար և թէ շնորհիւ այդ ջանքերի՝ ինչ
փայլուն արդիւնքների են հասել:

Պրոֆեսոր Տօլդը խօսեց Տիւրում բնակվող ժո-
ղովրդի ֆիզիքական ցեղային առանձնայատկու-
թիւնների մասին և մանրադնին հետախուզու-
թեամբ ցոյց տուեց, ամբողջ երկրի վերաբերութեամբ
թէ ինչ մասում ինչ արտաքին յատկութիւններ
ունեցող տիրոջներն են ապրում, ի նկատի առ-
նելով նրանց գլխի ձևը, կաշւի գոյնը, մարմնի
մեծութիւնը և այլն. այնպէս որ կարելի է վստա-
հուեալով ասել, թէ այսօր Տիւրում չը կայ մի
անկին, մի յետ ընկած գիւղ, որ անթրոպոլո-
գիայի համար պարզված չը լինի: Վիդերը ցոյց
տուեց, թէ ինստիտուտի անթրոպոլոգիան յանձնա-
ժողովը իր հիմնվելուց ի վեր, 25 տարվա ըն-
թացքում, ինչ առաջադիմութիւն է ցոյց տուել, որի
փայլուն ապացոյցը քաղաքի Ֆերդինանդայում
կոչված թանգարանի հարուստ ժողովածուն է:

Օգոստոսի 13-ի ժողովը պարապելու է գլխաւո-
րապէս հնագիտութիւնով և խօսողներից մէկը,
երիտասարդ գիտնական Լուշանը (Luschan) խօ-
սելու է նաև հայերի ծագման և նրանց ունեցած
առնչութեան մասին հին հետախուզի (քե-
ղութեան ազգի) հետ:

Մետոյ վարդապետ

Խնսրուկ

Օգոստ. 13.

առաջարկումներն, քաղաքականության տար-
րերի զործունեությունն զարգացման:

Թափառականների շնորհով դեռ կենդա-
նի է մնում այն աշխարհահայեցքը, որ
նրանք ունեն իրերի և մարդկանց վրա
նրանց շնորհիւ երկիրը չէ խաղաղվում իր
այն տեղերում, որոնք մեծ կենտրոններից
հեռու են, ուր հսկողությունը չէ կարող
ուժեղ լինել:

Մեր գաղառում հասարակ երկրներում
թիւնը, դիւզից դիւզ, քաղաքից քաղաք
ճանապարհորդությունը ենթակայ է մշտա-
կան անխորժ պատահարների: Մեր գա-
ղառում դեռ անկարելի է համարվում ար-
ձակ-համարձակ մի գործարան հիմնել, մի
կայուն ծրագրով գործել, մի արդիւնաբերու-
թեամբ զբաղվել: Միշտ զգուշութիւններ
են պահանջվում, միշտ արթնութեամբ պահա-
պաններ են հարկաւոր, կարծէք թէ միջին
դարերում ենք ապրում և ամրոցների կա-
ռուցումը դեռ չէ անցել:

Թափառականներին, ի հարկէ, մի ան-
գամից չէ կարելի նստակիաց շինել, չէ կա-
րելի մի օր հրաման արձակել թէ նրանք
այլ ևս իրաւունք չունեն թափառելու, և թէ
խիղճն պէտք է հաստատվեն մի օր և է
հողի վրա: Բայց կարելի է և պէտք է մի
կողմից միջոցներ ձեռք առնել նրանց հա-
մար հեշտացնելու այդ գործը, և միւս կող-
մից պէտք չէ, զոնէ այսուհետեւ, նպատակ
թափառական կենսակերպ:

Իրականութեան մէջ սակայն մենք տես-
նում ենք, որ շատ անգամ ղեկավարող
ընթացքներ աշխատում են յարմարվել թա-
փառականների պահանջներին և նոյն իսկ
դիւրութիւններ ստեղծել թափառական
կենսակերպի համար: Երբ խնդիր է ծագում
լեռնային հողի բաժանման մասին, յաճախ
տեսնում էք, որ այդ լեռներում նստա-
կեաց ապրող գիւղացին զրկված է միւս
արտադրանքից, իսկ հեռու տեղից եկած հա-
րուստ, թափառական անասնապահ, որ
ինքը մենակ աւելի տաւար ունի, քան
բնիկների ամբողջ զիւղը, ստանում է այն-
քան արտադրանք, որ ոչ միայն իր պէտքե-
րին է բաւարարվում, այլ թոյլ է տալիս և ուրիշների տաւարը ընդունել
յայտնի վարձով:

Թափառականը այս րօպէին կովկասում
ձնշված չէ և նա իր կենցաղավարութեան
համար բոլոր դիւրութիւններն ունի: Մինչ-
դեռ բոլոր այն տեղերում, ուր նա չի գտնում
է նստակեացի հետ, վերջինս զգում է ա-
րտադրանքի պակասութիւն և առհասարակ
զուրկ է անտեսական ապահովութիւնից:

Միջոցառ թափառականների մէջ վերջին
ժամանակները նկատվում է մի, թէև դեռ
փոքր, շարժում դէպի նստակեաց կենսակերպ:
որից պէտք է օգուտ քաղել նպատակայա-
րմար հետեւանքների համար:

Նոյն իսկ քրդերը, որոնք ամբողջ դա-
րեր վարելով ստանդարտ կենսակերպ, ոչ մի
հակում չէին ցոյց տալիս դէպի երկրագոր-
ծական կենսակերպ, այժմ, վերջին տասն, տասն-
հինգ տարում, սկսում են անտեսու-
թեան փորձեր անել: Նրանք դեռ իրանք
չեն վարելով ցանքում իրանց հողերը, այլ
կիսով կամ մի ուրիշ պայմանով տալիս են
մշակելու տեղացի հայերին: Բայց այն մեծ
արդիւնքները, որ նրանք ստանում են ի-
րանց ընդարձակ և դեռ այժմ չը կորցրած
հողերից, արդէն սկսել է նրանց թելադրել
երկրագործութեանը տալ նրան վայել նը-
շանակութիւն:

Պէտք է օգտվել այդ շարժումից և աշ-
խատել վերջ դնել թափառական կենսակեր-
պի արտայայտութիւններին, որոնք կանգ-
նեցնում են մեր մէջ խաղաղ կուլտուրական
կենսակերպ:

Թափառականութիւնը թշնամի է քաղա-
քակրթութեան: Պէտք է ամեն կերպ նը-
կատել, որ նստակեաց կուլտուրական
կենսակերպ աւելի արդիւնաւէտ, շահաւէտ
դառնայ այն բոլոր համայնքների համար,
որոնք այժմ թափառական կենսակերպ են վա-
րում: Պէտք է թափառականին շատ պարզ
յայտնել, որ նրա կենցաղավարութեան ձեւը
հաճելի չէ և որ նա չը պէտք է ոչ մի
յոյս տածի, որ այդ կենցաղավարութիւնը
կարող է խրախուս գտնել երբ և իցէ դե-
կավարող ընթացքների կողմից:

Թափառականութիւնը թշնամի է քաղա-
քակրթութեան: Պէտք է ամեն կերպ նը-
կատել, որ նստակեաց կուլտուրական
կենսակերպ աւելի արդիւնաւէտ, շահաւէտ
դառնայ այն բոլոր համայնքների համար,
որոնք այժմ թափառական կենսակերպ են վա-
րում: Պէտք է թափառականին շատ պարզ
յայտնել, որ նրա կենցաղավարութեան ձեւը
հաճելի չէ և որ նա չը պէտք է ոչ մի
յոյս տածի, որ այդ կենցաղավարութիւնը
կարող է խրախուս գտնել երբ և իցէ դե-
կավարող ընթացքների կողմից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԼԻ ՄԻ ՓԱՍՏ

Մենք հարկաւոր ենք համարում արձանագրել
մի իրողութիւն, որ դեռ նոր ամենքի աչքի ա-
ռաջ կատարվեց, մի անգամ ևս ապացուցանելու,
որ մեր խաւարամիտ մամուլը ամեն բանի մէջ
ղեկավարվում է լոկ անձնական հաշիւներով և
գաղափարի նշոյլ անգամ չը կայ նրա գործու-
նեութեան մէջ:

Վեր առնենք իբրև ապացոյց, բայց վերին ա-
տիճանի ընտրող և անհրաժեշտ ապացոյց, Սարգիս
Քանանայ Բէգնազարեանի գրքի հարցը:

Այդ ուսեալ քանանայ, որ ձեռնադրվել է Սեդ-
րակեան եպիսկոպոսի ձեռքով, մի երկու տարի
առաջ հրատարակում է «Քրիստոնէական վար-
դապետութեան» մի համառոտ ձեռնարկ, զբա-
ղողների համար: Կատարելով ընկնում է սխալի
կողմից և ձանաչվում իբրև «համաձայն Հայաս-
տանեայց առաքելական եկեղեցւոյ վարդապետու-
թեան» և տպագրութիւնը թոյլատրվում է: Եւ
հա՛, հաղիւ հրատարակվում է գիրքը, որ Բէգնա-
զարեան քանանայի դէմ սկսվում է մի կատարեալ
խաչակրական արշաւանք: «Արձագանք» իր կու-
սակիցներով միասին ահալին առաջնորդողներ,
բանասիրականներ, թղթակցութիւններ են գրում
ամբողջ տարի շարունակ, ապացուցանելու հա-
մար, որ այդ Բէգնազարեան քարոզում է հերե-
տիկական մտքեր, հերձուածողական գաղափար-
ներ, հակառակ հայոց և կեղեցու ուղղափառ վար-
դապետութեան: Ի վերջոյ Բէգնազարեան հուշակ-
վեց հերետիկոս և հերձուածող, քաղկեդոնական,
և տիգրանեան երեք սինոդական եպիսկոպոսների
բերանով, որոնք հրատարակեցին «Արձագանք»
մէջ իրանց վճռագիրը և որոնց «Արձագանք» ա-
նուանեց «Հայաստանեայց առաքելական եկեղեց-
ւոյ արթիւն հովիտներ և քաջ աստուածաբաններ»:

Բէգնազարեան քանանայ հերքեց այդ բոլորը,
ապացուցեց այդ քաջ աստուածաբաններին, որ
իրանք թոյլատրել են իր դատաւարները, մասնակ-
ցելով սինոդի վճռին, որ ուրիշ քանանայներ ևս
հրատարակել են կրօնի դատաւարներ, որոնց մէջ
նոյն մտքերն են յայտնված, բայց նրանք չեն ամ-
բաստանվում հերձուածողութեան մէջ, բայց ոչ
դեռ անհնջ չը դրեց: Եղբայրների խորամանկ ջան-
քերով, նրա դատաւարները, իբրև հերձուածողական,
արդիւնք Երեսինեան դպրոցում և նրա ձեռքից
խլեցին կրօնի դասերը, մոռանալով, որ այդ նոյն
Բէգնազարեան, նոյն իսկ նոյն հոգաբարձութեան
օրով, նոյն իսկ Մակար կաթողիկոսի ժամանակ,
դաս էր տալիս նոյն ձեռնարկով և ոչ ոքի մտքից
չէր անցնում անուանել նրան հերետիկոս:

Եթէ այդ ողորմելի հալածողների ձեռքից գար,
առանց խղճահարկելու կը պահանջէին, որ Բէգ-
նազարեան մասնակի խաղաղի բողոքին, իբրև վը-
րանգաւոր հերետիկոս:

Ի հարկէ, հասարակութեան մեծամասնութեան
համար օր ցերեկի պէս պարզ էր, որ Բէգնազա-
րեան հայաժողով է ոչ թէ նրա համար, որ հերե-
տիկոսական մտքեր է արտայայտել, այլ օրով հե-
տե Եկեղեցական ձեռնարկածն և նրա յարգող-
ներին է, որպէս զի ասին, թէ Էսա՛ ձեռք Սեդ-
րակեանի ձեռնադրած ուսումնականը, որ հերե-
տիկոս է:

Եւ հա՛, ո՛վ խայտառակութիւն, դուրս եկաւ,
որ այդ բոլորը սուտ է, չիմոտ է և տգիտու-
թեան արդիւնք: Վեհափառ կաթողիկոսը, քննե-
լով այդ դատաւարները և գտնելով նրան համաձայն
Հայաստանեայց եկեղեցու վարդապետութեան,
թոյլատրում է գործադրել նրան իբրև ձեռնարկ
բոլոր դպրոցներում:

Ուրեմն հարցը պարզված է: Եւ քանի որ խա-
ւարամիտները իրանք անդադար կրկնում են, թէ
Էկաթողիկոսական հեղինակութեան առաջ անպայ-
ման պէտք է խոնարհվել, թէ նրա վճիռը սուրբ
է, թէ նրան չը հնազանդողը՝ ազգի և եկեղեցու
առաջ զոյգութիւն չունի, պէտք է ուրեմն ընդու-
նել, որ Բէգնազարեանի դատաւարներ մասին վեհա-
փառ կայացրած վճիռը անպայման պարտաւոր
է այդ խաւարամիտների համար: Եւ օրով հետեւ
այդ վճիռը վերահաստատում է Բէգնազարեանի
չօչնալից պատիւը, համբաւը, հրատարակում է
նրան ուղղափառ, ուրեմն պարզ է, որ նա ամ-
բաստանվել է, զրպարտվել է անարդարապէս, ա-
նիրաւարար, և բոլորովին դուր տեղը ենթարկվել է
ինկվիզիցիական հալածանքի:

Բէգնազարեանին զրպարտող, հալածող «Արձա-
գանք» իր նմաներով, եթէ ունենային խղճի,
գրական էտիկայի մի փոքր նշոյլ անգամ,
պէտք է շտապէին մեղայական ասել և խոստու-
վանել իրանց սխալը: Սակայն դրանք մինչև այ-
սօր ոչ միայն այդ չարեցին, այլ կատարեալ դա-
քարէական պապանձում պահեցին վեհափառի
վճռի մասին և մինչև անգամ իբրև իրողութիւն
չը հաղորդեցին:

Դուք անդադար կրկնում էք, որ վեհափառ
կաթողիկոսի խօսքը սուրբ է ձեզ համար և նրա
բարձր հեղինակութիւնը անպայման ընդունելի
եթէ ձեր խօսքերը ցած չղցրեք թղթի վրային չեն,
այլ համոզմունք, ուրեմն վեհափառի վճիռը պէտք
է ձեզ ապացուցանէ ձեր խորին տգիտութիւնը
կրօնական հարցերի մէջ, ձեր գովաբանած երեք
քաջ աստուածաբան եպիսկոպոսների կատարեալ
անգիտութիւնը աստուածաբանութեան մէջ և
նրանց չարաչար սխալը: Ինչու՞ աղնութիւն և
քաջութիւն չունէք այդ բանը խոստովանելու:
սխալ անել յանցանք չէ դեռ, բայց յանցանք է
սխալը չը խոստովանելը և այն ևս այնպիսի
սխալ, որ արեգակի պէս պարզ է:

Բայց այդպէս էք միշտ դուք, երբ ձեզ բռնում
են մի սխալի մէջ, երբ տեսնում էք, որ այլ ևս
փախչելու ոչ մի ճանապարհ չը կայ, դուք գործ
էք դնում այն տակտիկան, որ զաքարէական պա-
պանձումն է կոչվում:

Այս մի ուրիշ ապացոյց ևս Ներսիսեան զբա-
ղողի հոգաբարձական ընտրութիւն եղաւ. դուք
շարունակ բողոքեցիք, որ այդ ընտրութիւնը ան-
կանոն է, ապօրէն է, բայց երբ վեհափառը վա-
ւերացրեց այդ ընտրութիւնը, դուք պարտաւոր
էիք անպայման հնազանդվել, խոնարհվել նրա վճռի
առաջ և ընդունել այդ ընտրութիւնը իբրև օրի-
նաւոր: Բայց դուք մինչև անգամ փաստը չարձա-
նագրեցիք:

Եւ այդ բոլորից յետոյ ինչու՞ էք զարմանում,
որ ձեր խօսքերին նշանակութիւն չեն տալիս և
ձեզ հաւատ չեն ընծայում:

Հ. Ա.

ՆԱՄՈՒԿ ԿԱՂՋՈՒԱՆԻՑ

Օգոստոսի 10-ին

Կաղզուանից 20—25 վերան հեռու դէպի հա-
րաւ գտնվում է «Վարդիհէտ» կոչված հուշակառու-
ութեամբ, որ տարին 5 անգամ գալիս են
ուրախ կաղզուանից, կողբից, կարսից, Ալեքսանդ-
րօպօլից, Ալաշկերտից և այլն: Հայր Արիշանը իր
«Արարատ» աշխատութեան մէջ ընդարձակօրէն
խոսում է այդ վանքի մասին՝ Արշարունիքի նկա-
րագրութեան մէջ:

Յուլիսի 23-ին Կաղզուանից դուրս եկանք դե-
պի Վարդիհէտ: Քաղաքի մօտիցն և եթ ճանա-
պարհը բարձրանում է դէպի լեռը և բարձրաբերձ
լեռների լանջերով շարունակվում է մինչև վան-
քը: Ամեն տեղ ձեր աչքերի առաջ պատկերա-
ւոր է վայրի բնութիւնը—լեռների անվերջ չըդ-
րանք, ահալին դարձանդներ, անդադարաւոր ձո-
րեր, ներքեւ, ձեր աչքերի տակ, տարածված է
Արաքսի հովիտը, որի միջից որպէս մի արծա-
թեայ գալարուն ժապաւէն փայլում է մայր Ա-
րաքսը՝ յարեցանալով նայողի մէջ «հին հին դա-
րուց յիշատակ»:

Ամբողջ ճանապարհի վրա նկատելի են ստորերկ-
րեայ գործունէութեան հետքերը: Երկրաշարժը
յաճախ շարժում է այս տեղերը և դուք իւրա-
քանչիւր քայլափոխում նկատում էք ձեռքաւածք-
ներ, լեռների փափաւներ, շատ տեղ գետինը
ցածրացել, իջել է: Չը նայելով մեր Կաղզուանի
հարթ բարձրաւանդակի վրա, ծառագործի տեղե-
րում, բուսականութիւնը արդէն գեղնել, չորացել
է, այստեղ, ընդհակառակն, տարածվում է ձօխ,
չըղջ բուսականութիւն. այստեղ գարունը դեռ ևս
իր փթիթիւն մէջն է, երկրներանց ծաղիկները
հրաշալի տեսարան են ներկայացնում և սառնու-
րակ, վճիռ բազմաթիւ առուականներ զարգրահամ
յրերը ախորժիկի գոլովութիւն են տալիս արևի
տապից տանջվող ուղևորին:

Ամեն տեղ, թէ ճանապարհին և թէ նոյն իսկ
վանքի ձորում, տեսնվում են անտառի մնացորդ-
ները: Կաղզուանի հին տների մէջ ձեզ ցոյց են
տալիս ահալին գերաններ, որ կտրել են մի ժա-
մանակ քաղաքի մօտերը: Գտնված անտառից:
Համեմատաբար, կարճ ժամանակամիջոցի ընթաց-
քում, անհաշիւ կտրատելով սպառել են անտառը
և այսօր այդ անտառի մնացորդներն են կազմում

կարճատև թփեր և տեղ տեղ երեացող մայ-
րիներ: Չը ճանապարհը անցնում է մի նեղ կա-
մանով. ձեր մի կողմը բարձրադաճած լեռներն
են, իսկ միւս կողմը բացվում է անյատակ ան-
դունդը: Այդ անդունդի եզերքով յուշիկ ու զգոյշ
քայլերով անցնում են ուխտաւորների ձիերն ու
էշերը. մի անձնիչ քայլ կենդանու կողմից՝ և դուք
կը գանալի՜ք անդունդը...

Քանի քանի անգամ սարսուռ, զգալուց յետոյ,
ի վերջոյ, դուք մտնում էք վանքի ձորը, որ
պատմութեան մէջ յայտնի է Վիշապաձոր անու-
նով: Չորի մէջ՝ պայտաձև մի բլրակի վրա, որոշ
տեսնվում է վանքը, որի մէջ գտնվում են Պա-
թուլ և Վարսո կրօնաւորների չիրմները: Պատ-
մութիւնը ասում է, որ երբեմն այդտեղ եղել է
եպիսկոպոսանիստ աթոռ, ունեցել է բազմաթիւ
միաբանութիւն, բայց այժմ ոչինչ չը կայ և նոյն
իսկ վանքը հինաւուրց շինութիւն չէ, այլ, ինչ-
պէս երևում է, վերջին ժամանակների շինած մի
հասարակ մատուռ է, կիսով չափ խախտված,
որը սպառնում է փլուզ: Փոքր ինչ հեռուն, ժայ-
ռի վերջից ցոյց են տալիս կրօնաւորների ձգնա-
րանը—այդ և աղբիւրը: Չորի շուրջը ձգնա-
պատ, ահալի լեռներ են. մեր առաջը գտնված
լեռան միւս երեսում Ալաշկերտն է. մենք զբոս-
նում ենք ռուս-թաթկական սահմանագլխի վրա:

Վանքի շուրջը գետնով են ուխտաւորները,
ոմանք վրանների, տաղաւարների տակ, ոմանք
բացօդեայ: Գոյ զուռնան ածուժ է. երիտասարդ
ները շրջանաձև շարք կազմած պարում են: Վի-
շեր է. խաղերից կազմված խաղերը խոր-
հրաւոր լոյս են սփռում շուրջը. բոլոր աչքը
խաչված են, խօրով և սփռում շուրջը. բոլոր աչքը
գինու և արագի շիշերը բացվում են, արձակվում
են դրա հետ միաժամանակ և շատերի լեզու-
կանքները, հայերն, թուրքերն, քրդերն եր-
գեր օդն են թնդացնում, չալալում են բարե-
մաղթութիւններ, չեն մոռացվում և լեռան միւս
երեսի հայերը...

Թիւրքիացի մի-երկու հայ ընտանիք արդէն ե-
կել են վանքը և մեզ հետ դալու են Կաղզուանի
վերջապէս, սակաւ առ սակաւ դադարում են
երգերը, նուագածութիւնը, համեմատական լուռ-
ութիւնը տիրում է: Չորի ահալի տեսիլը, խաւար
գիշերը, աստղալից երկինքը տարօրինակ աղբե-
ցութիւն են գործում մարդու վրա, ջուրը միախ-
լում է. ուղեղը արագութեամբ զբաւում է մտա-
պառնքելու անցնալից և ներկայից յաջորդում են
միմեանց. դուք համեմատում էք կենսակերպ
և լեռան այն կողմը, ձեռքից փոքր ինչ հեռուն,
դուք գիտեք, որ այստեղի նուագարանների, երգե-
րի, ծիծաղի, հացկերոյթի փոխարէն այնտեղ տի-
րապետում է լացը, հառաչանքը, քաղցը... Ուխ-
տաւորների ջուրը երկարատեւ չէ. խաղայինը
նորոգում են, մատաղ մորթում, ժամովի ձայնը
հրաւիրում է դէպի եկեղեցի: Գարձաւ սկսվում է
հացկերոյթը, արեւոյդութիւնը, սրկանները ան-
լուր յիշողներ են թափում, տուր ու դմիոցն ըս-
կալում է, մի քանի դէմքեր կարմիր ներկվում
են: Ուխտաւորացիութեան նախնական գաղափարը
կորել է, գառը մորթում են քէֆ անելու հա-
մար և սուրբի վրա էլ մոռնալ են գալիս՝
անուր մատաղ դնելով, գալիս են Աստուծոյ
տաճարին ուխտ անելու և ամենամեծ ուխտը,
երկրապարկութիւնը մատուցանում են Բագոսին:
Ուխտաւորացիութեան ամենագրաւիչ և վատ կողմը
զարձել է՝ արեւոյդութիւնը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՊՆԻ

Մեզ մի մասնաւոր նամակով հաղորդում են,
որ վերջին ժամանակներս Վանի վիլայէթում,
զիւլաւորապէս պարսից սահմանի վրա, քրդերից
կազմված աւազակային խմբեր մեծ աւարտու-
թիւններ են անում: Այդ խմբերը յարձակվում և
թալանում են ոչ թէ միայն ոչխարների հօտեր,
այլ և ամբողջ գիւղեր:

Մեր խմբագրութեան լաւ ծանօթ մի անձ, որ
նորերս եղել է Լիմաթիւնում, օգոստոսի 21-ից
հեռագրում է մեզ. «Երբեք ներկայացայ վեհափառ
կաթողիկոսին Արքայի Մանդիկեան չէ հաստատու-
ված: Նոր հոգաբարձութեանը կառավարիկի կատա-
րել տեսչի ընտրութիւն»:

«Հայոց ազգային ժողովը կ. Պոլսում, ինչպէս
գրում է «Новости» լրագրի թղթակիցը, երեկ

կընտրի վերջապէս ժամանակաւոր պատրիարք, յետաձգելով վերջնական ընտրութիւնները: Դադար վի անդամները պատրիարքարանում դիմադրում են և չեն ցանկանում այնպիսի մի վճիռ կայացնել, որը կարող է խախտել հայոց սահմանադրութիւնը, առարկելով, թէ իրանց լիազօրութիւնները ժամանակամիջոցը երկու տարի առաջ է լրացել, և թիւրքաց կառավարութիւնն էր պատճառ, որ արգելում էր ազգային ժողով հրաւիրել: Արդարադատութեան միջնորդը սպառնում է նրանց, որ եթէ ազգային ժողովի անդամները կը դիմադրեն, պետական դաւաճանութեան համար դատի կենթարկվեն նրանք:

Մի թատերասէր ուղարկել է մեզ տպագրելու հետեւեալ նկատողութիւնը: «Սեպտեմբերը մօտենում է, և ինչպէս լսում ենք, հայ դերասանները միասնաբար ընկերութիւն են կազմել և կամենում են այս տարի էլ այդ ձևով պահել հայոց բեմի գոյութիւնը Թիֆլիսում: Հաւատացած ենք, որ իրանք, դերասանները, մի քանի կողմնակի անձանց սխալկոթեցումով, աւելի հաստատ հիմքերի վրա և աւելի աշուղ կերպով կը տանեն թատրոնի բարձր գործը, քան որ և է թատրոնական մասնատողով, որի պաշտօնն է կարծէք միայն և միմիայն ուսման վճարել դերասաններին: Գերասանական խմբի անդամները այս կերպով միանալով, անշուշտ առանց ժամանակ կորցնելու, կաշխատեն իրանց ոյժերը վերականգնել և ձեռք ձեռքի տուած, համբարախ ոգով, կը ձեռնարկեն ներկայ ոյժերի համեմատ պատրաստել ըսպէրտաւորը, հոգս քաշելով իրանց կրկնութիւններին հրաւիրելու, իբր ըկէսոր, թատրոնական գործին հմուտ մի անձնաւորութիւն: Եթէ դերասանները թատրոնի մասին մի փոքր աւելի մտածեն, և իրանց դերերը աւելի խնամքով պատրաստեն, աշխատելով որքան հնար է հնուս մնալ բեմին յատուկ մանր-մունք խնդիրներին, այն ժամանակ կարելի է հաւատացած լինել, որ հասարակութիւնը մայրենի թատրոնին կը վերաբերվի համակրանքով, ցոյց կը տայ աջակցութիւն և դերասանների աշխատանքը արդարապէս կը վարձատրվի: Կրկնում ենք, առանց ժամանակ կորցնելու և եռանդով գործի պէտք է ձեռնարկել, որովհետեւ միջոցը շատ կարճ է մինչև ներկայացումների սկսելը, իսկ դերասանները իրանց առաջ դրած բաւական գործեր ունեն կարգի դնելու, որ շատ ժամանակ կը խլէ նրանցից:»

Ստացանք Գեորգ Արուիկանի «Համառոտութիւն հայոց ազգի պատմութեան» գիրքը, որ այս օրերը լայն է տեսնել չորրորդ տպագրութեամբ: Այդ գիրքը արդէն յայտնի է հայոց գրողներու և նոյն իսկ ընթերցող հասարակութեան: Գիրքը շատ է ժամանցարժէք է. 270 երեսից բաղկացած գիրքը արժէ 40 կօպէկ:

Պետերբուրգում, միջնորդների ներկայութեամբ, յուլիսի 30-ին մի աշուղ իորձ արվելը խնդրելով հնարած այն մեքենայի վրա, որով ոչնչանում է չողանաւորի և գործարանների ծխնելոցների ծուխը: Մեքենայի ղեկավարը, երբ կամենում էր, թող էր տալիս, որ ծխնելոցներից ծուխ դուրս գայ և ընդհակառակն, իր ցանկութեան համաձայն՝ ոչնչացնում էր այդ ծուխը: Այդ մեքենան շատ մեծ նշանակութիւն կարող է ունենալ գործնական կենսի մէջ: Այդպիսի մեքենայի կարեւորութիւնը վաղուց էր զգացվում: Ինչպէս յայտնի է, Բազուկ, առանձին ֆորսուկների միջոցով, հնարար էր դարձել ծխի դէմ կռուել և Ա. Բազուկը, որը առաջ թաղված էր ծխի մէջ, այժմ այնքան ազատ է նրանից, որ բազուկները կատակով ասում են, թէ Ա. Բազուկը այժմ սպիտակ է դարձել:

«Կիւնի» մարդատար չողանաւոր վաղաք գետի վրա, ինչպէս հեռագրում են «Нов. Обозр.» լրագրին, խորտակվել է:

Եւրոպայի դանադան քաղաքներում մինչև այժմ շարունակում են Կ. Պոլսի երկրաշարժից վնասվածների ողորդ նպաստներ հաւաքել. աւստրիական Ֆրանց Յովսէփի կայսրը նուրբել է 10.000 ֆրանկ: Պարիզում երկու ցուցակով հանգանակվել է 253.625 ֆրանկ, իսկ Կ. Պոլսի մասնաժողովը ստացել է մինչև այժմ 2,352,978 զուրուշ կամ մետ 190.000 ռուբլի: Անտարակոյտ այդ նըպաստների քանակութիւնը աւելի մեծ կը լինէր,

եթէ այն համոզմունքը տիրէր, թէ բոլոր նպաստները հասնում են բուն նպատակին:

Այսօր, երեքշաբթի, ամսիս 23-ին, տեղի կունենայ Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան արտակարգ նիստը: Ժողովի պարագմունքներն են. 1) ընթացիկ գործեր և 2) Պետերբուրգի միջազգային մրցահանդէսին մասնակցելու համար մի մարդ ուղարկելու հարցը: Սկիզբն է 7 1/2 ժամին: Կարող են մասնակցել և կողմնակի անձինք:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագրիները, ըրբազգում է 1 1/2 միլիոն ռուբլու փոխառութիւն անելու հարցով: Այդ գումարը պէտք է գործադրվի Թիֆլիսի ջրանցքի ջուրը աւելացնելու համար:

«Съверный Вѣстникъ» ամսագիրը իր այս տարվայ մայիսի համարի մէջ մի քանի տող է նուիրել վրաց «Մօսմբէ» լրագրին և նրա առիթով վրաց գրականութեան: Ամսագրի աբտայայտած կարծիքները բաւական տարօրինակ են և լուրջ բնաստութիւն չեն կրում, մասնաւորապէս յօդուածը գրված է մասամբ և հեղինակը «Գուցէ, ասում է ամսագիրը, ռուս ընթերցողներին չատքերին է յայտնի ոչ միայն վրաց ամսագիր «Մօսմբէ», այլ և առհասարակ վրաց գրականութեան գոյութիւնը. բայց ինչ հոգ, դրա փոխարէն իրանք վրացիները անկեղծ հաւատում են, որ վրաց գրականութիւնը յայտնի է ոչ միայն ամեն մի ռուս միջին ընթերցողին, այլ և ռուս պետութեան սահմաններից դուրս: Մինչև անգամ վրաց լրագրիները պարոն խմբագիրները ազատ են այդ տեսակ միամիտ ենթադրութիւնից: Օրինակ, երբ մի անգամ դանադան ազգերի գրականական պատգամաւորութիւնները տնուում էին համաշխարհային բանաստեղծ Վիկտոր Հիւգօի յօդուածը, ի թիւս այլոց ներկայանում է նրան և այն ժամանակվայ վրաց «Գրօքթա» լրագրի խմբագիրը: Բայց որքան մեծ էր այդ խմբագրի զորութիւնը, երբ աւելոր բանաստեղծը խոր ազդութիւն արտայայտեց, առաջին անգամ լսելով ոչ միայն վրաց գրականութեան, այլ և վրաց երկրի գոյութեան մասին, խնդրելով նրանից բացատրել իրան, թէ այդ Բնչ աղբ է և որտեղ է բնակվում:» Ծաղրելով այսպէս վրացիներին, վրաց գրականութիւնը և լեզուն, ռուս ամսագրի խմբագրութիւնը մոռանում է, որ դուցէ Վիկտոր Հիւգօն տեղեկութիւն անգամ չունէր և «Съверный Вѣстникъ»-ի նման ամսագրիների գոյութեան մասին: Ռուս ամսագիրը, որը, ինչպէս երևում է, իր մասին մեծ կարծիք ունի, շարունակում է այսպէս. «Ինչ է ինչ, բայց մեզ հաստատապէս յայտնի է, որ վրաց ազգը գոյութիւն ունի Կովկասում, որը ունի իր սեփական լեզուն, իր սեփական այբուբենը, իր գրականութիւնը, երկուսն էլ պարբերական լրագրիներ և ահա մեր առաջ արդէն դրված է մինչև անգամ մի ամսօրեայ հանդէս՝ 10 տպագրական թիւթից բաղկացած: Այդ ամսագրի արտաքին մաքուր տեսքը, բովանդակութեան համեմատական հարստութիւնը և բազմազանութիւնը, հրատարակիչ Գօգթբէրիձէի շատ յայտնի անունը, — այդ բոլորը խոստանում է ամսագրին աշուղութիւնը: Եթէ մենք, Կովկասում ապրողներս ոչինչ չը գիտենք այն մասին, թէ «Մօսմբէ» հրատարակիչ Գօգթբէրիձէն շատ յայտնի անձնաւորութիւն է, իսկ այդ մասին գիտէ Պետերբուրգի ամսագիրը, էլ Բնչու է դարձնում նա Վիկտոր Հիւգօի անդիտութեան վրա: Մի բան միայն ամսագիրը ճիշդ է նկատում, այն, որ «Մօսմբէ» աշխատակցում են վրաց գրականութեան բոլոր առհեռն յայտնի ոյժերը, չը նայելով իրանց ուղղութեան և աշխարհայեցողութեան զանազանութեան: Այնպիսի գրական գործիչներ, ինչպէս են Հավճաւաճէ, Յէրէտէլի և Նիկօլաճէ, որոնք ամբողջ իրանց կենսութեամբ միսեանց դէմ կռու էին մղում, այժմ միասին աշխատակցում են այդ ամսագրին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԱՊՈՆԱԿԱՆ ԵՒ ԶԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Պատերազմական աշուղութիւնները զորեցին Եւրոպայի աւելի բնական յարաբերութիւններ հաստատել եւրոպական պետութիւնների հետ: Մինչև այժմ եւրոպական պետութիւնները Եւրոպայի վերաբերվում էին այնպէս, ինչպէս և բոլոր ասիական պետութիւններին: Օրինակ, եւրոպացիները իրաւունք չունէին եւրոպացիներին դատի ենթարկել մի որ և է յանցանքի համար: Եւրոպացիները վաղուց աշխատում էին իրաւունք ձեռք բերել եւրոպացիներին դատելու իրանց դատարաններում, նրանք մասնացոյց էին անում իրանց օրինակելի դատարանների և արդարադատութեան վրա և եւրոպացիների վարմունքը վիրաւորական էին համարում իրանց համար: Եւրոպական պետութիւնները վաղուց համաձայնվում և ընդունում էին Եւրոպայի արդարացի պահանջները, և միայն Անգլիան չէր տալիս իր համաձայնութիւնը: Այժմ Անգլիան անսպասելի կերպով տուեց իր համաձայնութիւնը և զրանով բաւարարութիւն տրվեց եւրոպացիների արդարացի պահանջներին:

«North China Herald» լրագիրը հաղորդում է, որ Պեկինում միջնորդական ժողով տեղի ունեցաւ, ուր ընկնում էին պատերազմական գործերը: Յօգուտ խաղաղութեան ձայն տուեց միայն մի նիստերից մէկը. մնացածները պատերազմը շարունակելու կողմն էին, մասնացոյց անելով եւրոպացիների յանդուգն գործողութիւնների վրա: Յիշատակելու կողմն էին, մասնացոյց անելով եւրոպացիների դէմ ստատիկ կատաղած են չինացիները. այդ երևում է Ֆորմոզայի նահանգապետի հրամանից: Այդ հրամանի մէջ ասված է, որ իւրաքանչիւր չինացի համապատասխան պարզ և ստանայ հետեւեալ քաջագործութիւնների համար. 1000 ռ. տրվում է եւրոպական զորահաւիր նաւը ծովը ընկղմելու համար. 500 ռ. հասարակ նաւի համար, 300 ռ. եւրոպական օֆիցերի զինի համար և 150 ռ. զինուորի համար: Արդէն զրանից երևում է թէ որքան նման չէ չինացիների պատերազմելու ձևը եւրոպականին: Նոյնքան դայրիթ է յարուցանում և նրանց վերաբերմունքը դէպի եւրոպական սանիտարական խմբերը: Չինացիները նախամտածած խոտաւորութեամբ ոչնչացնում են սանիտարներին: Մինչև այժմ

«Կարմիր խաչը» Տօկիօ չէ դնում, որովհետեւ դրա համար մեծ պաշտպանութիւն է պահանջվում չինական զինուորների զազանութիւնների դէմ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սարմատ, օգոստոսի 2-ին

Գերեզման վանքում տեղի ունեցած կուրի մասին արդէն հաղորդված է: Ահա նոր մանրամասնութիւններ: Սահմանադիր վրա կատարված 2 քիւրդերի սպանութիւնը սատակի գրգռել էր թէ փաշային և թէ քիւրդերին: Վաղուց դրանք մի առիթ էին որոնում վանքը քանդելու և այդ առիթը գտան հինգ քիւրդերի սպանութեան մէջ:

Հէնց այդ բանը գրուի բերելու համար, Բահրի փաշան վանից եկաւ Բաշկալայ: Վերջին ժամանակներս սահմանադիր երկու ցեղերի՝ մարզկցիների (որոնց ցեղապետը Դարաֆ-աղա է կոչվում) և մամադցիների մէջ տեղի ունէին ցեղական կռուներ (վերջինի ցեղապետն է Մամէն): Բահրի փաշան երկուսին էլ առաջարկում է արշաւել Գերեզման վրա, հրամայելով քանդել, տակն ու վրա անել վանքը, իսկ դերեկցիների դուրսները բերել վան:

Դարաֆ-աղան ընդունում է վերջապէս փաշայի առաջարկութիւնը, ինչպէս պատմում են, այն խոստումներով, որ փաշայութիւն ստանայ:

Յուլիսի 21-ին, առաւօտեան ժամը 9-ին, տեղի ունեցաւ քիւրդական յարձակումը: Դարաֆը եկել էր վանքի վրա ահագին պատրաստութեամբ: Քիւրդական արշաւախումբը բաղկացած էր 300-ից աւելի մարդկանցից, մի մասը քիւրդ ցեղերից, միւս մասը քիւրդական «համիդի» հեծելազորից, որոնք բահրիով — բրիտանիայի եկել էին վանքը քանդելու համար:

Վանքում կային միայն 20 հրացանաւորներ: Գիշերը քիւրդերը եկել էին վանքի չորս կողմի լեռները բռնել: 20—25-ի չափ ձիաւոր քիւրդեր յարձակվեցին նախիրի վրա, սկսվեց կատաղի կռիւ, որը տեւեց մօտ 3 ժամ. նախիրը հեռու գտնվելով վանքից, քիւրդերը կարողացան միայն նախիրը քշել ձորերով: Սխալ ընդդիմադրութեան հանդիպելով վանքի կողմից, այլ ևս չը համարձակվեցան յարձակվել վանքի վրա:

Վանքում եղողներից ոչ ոք չը վնասվեց. պատմում են, որ քիւրդերից սպանված է մէկ հոգի, իսկ վիրաւորված են երեքը: Ժողովուրդը մտադրութիւն ունի դիմել Դահիս և բողոքել թիւրքաց կառավարութեան դէմ:

Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՌԻՆ

—Արմատ սկանները Անգլիայում սկսել են պատերազմ յայտնել լորդերի ժողովին: Նրանց ընտրողական ծրագրի գլխաւոր կէտը կը լինի նոր կազմակերպութիւն տալ լորդերի ժողովին: Նորբուս, Հայդ-Պարկում, Լոնդոնում, լորդ-Մէրի տան հանդէպ տեղի ունեցաւ մի ահագին միտինգ լորդերի ժողովի դէմ:

—Մադրիդի «Ind. Belge» լրագրին հաղորդում են, թէ Մարոկկոյի անմիջիկապ լուրեր են ստացվում: Ապստամբութիւնը գնալով տարածվում է և եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները դիմեցին Մարոկկոյի սուլթանին՝ պահանջելով եւրոպական կոնսիւլների ապահովութիւնը:

—Հռոմից հեռագրում են, որ իտալական զինուորական միջնորդը հրաժարական է տուել: Նըրան յաջորդելու է Բիկտորի, որը զինուորական ծախսերի կրճատման կողմնակից է:

—Այս օրերս Լոնդոնում լուր տարածվեց Գըլադստօնի մահման մասին. բայց չուտով այդ լուրը հերքվեց Հովարդինց ստացված հեռագրով:

—Մի քանի չարաթ է տեսնում արդէն Դոտլանդիայում բարածուխի հանքերում աշխատող բանուորների գործադուլը: Այս օրերս Գլադստօն չըջանալու անկարգութիւններ տեղի ունեցան: Այդ առիթով պոլիցիան կարանաւորեց մի քանի բանուորներին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 օգոստոսի Բօրսա. կարուածական բանկերի գրաւական թղթեր՝ Թիֆլիսի 6% 0

1011/2, 50/0—100, Գուժայիսի 60/0—1011/2, 50/0—1001/2— Հաղորդակցութեան ճանապարհներին միջնորդը այսօր ճանապարհ ընկաւ դէպի Սիւրբի ճանապարհը Ազգապետութիւնը և դիրքակտոր Երևոյցի ուղիկցոյթեան—Նոր մուրհակային կանոնադրութեան նախագիծը առաջարկված է պետական խորհրդին—Նոյա կայսերական Մեծ իշխան Սիւրբի Ալեքսանդրովիչի, Մեծ իշխանուհի Օլգա Ալեքսանդրովնայի և յունական արքայադուհուհու երկէ ժամանեցին Բելոգիւղ:

1011/2, 20 օգոստոսի: Եւրոպական 14 պետերազմական նաւեր 4000 մարդկանցով յարձակում են գործում Արտուր նաւահանգիստը, որի զօրքը բաղկացած է 5000 հոգուց: Չինական նաւատորմին հրամայված է յետ մղել եւսպոնացիներին:

ՀՌՍՄ, 20 օգոստոսի: Կառավարութիւնը արգելեց սոցիալիստական համագումար ժողովը, որը պէտք է կայանայ այս օրերս Խոջուում:

ԲԵՐԼԻՆ 20 օգոստոսի: Խէմնիցում, սոցիալիստական պարագլուխների մօտ կատարված խուզարկութեան փաստնակ, որոնց կատարում էին զապտի ընկերակցութիւն կազմակերպելու մէջ, օտարխանութիւնը ձեռք գցեց այդ ընկերութեան ցուցակը:

ԲԵՐԼԻՆ 20 օգոստոսի: Ալեքսանդր թագաւորը ցանկութիւն յայտնեց այցելել Վիէննա կայսրին Բելլիւում հոկտեմբերին:

ՎԻԵՆՆԱ, 20 օգոստոսի: Երէկ առաւօտ, զօրաբաժինը՝ կապած օդաւորակի վրա հրացանաձեղքութեան փորձեր անելու ժամանակ, թռիկ կտրվեց և օդաւորակը թռաւ. օդաւորակի կողմում դանդաղ էր պարուհի Գլորիա Կ. Երկու կողման օդաւորակը իջաւ Բոսնիա: Պարուհի Գլորիա Կ. մինչև վաղ էր սպասում, որովհետև կողովը խարխուլ չուներ:

ԼՕՆԴՈՆ, 20 օգոստոսի: Եւրոպական զօրքերը կրկին յարձակում գործեցին Արտուր նաւահանգիստի վրա. այնտեղ ճանապարհ ընկաւ երկէ անգլիական զինուորական նաւը, որը եկել էր Նիվոնգից: Տասուձեղ գետաբերանում տեսել են եւսպոնացիների բաղձաթիւ դիրաներ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 21 օգոստոսի: Երէկ ճանապարհ ընկաւ դէպի արտասահման ֆինանսների մինիստրը—Հրատարակված է օրէնք՝ հոգևոր դպրոցներում ծառայողների ուժեղներն աւելացնելու մասին:

ՆԻՇՆԵՆԿՈՎԳՐՈՐԴ, 21 օգոստոսի: Ղզարի գինիները լու են ծախվում. մի քանի ֆիրմաներ արդէն ծախել են իրանց բերած բոլոր գինիները: Սպիտակ և կարմիր գինիներ 300/0 պակաս են բերված անցեալ տարվանից. յատկութեամբ անցեալ տարվայ գինիներից վատ է. գները 2 ր. 60 կոպէկից մինչև 3 ր. 25 կոպէկ:

ՕԴԵՍՍԱ, 21 օգոստոսի: Այստեղ ժամանեց Իտալական պարամենտի պատգամաւոր, բարոն Չիանչոյ՝ ծանօթանալու «Վաղմիր» և «Էփուլ» բաժնի շահերակերի ընդհարման գործի հետ և ներկայ կը լինի այդ գործի քննութեանը դատարանում սեպտեմբերի երկրորդ կիսին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 19-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ	93 ր. 05 Կ.
Բերլինի վրա 100 մարկ	45 ր. 60 >
Պարիզի վրա 100 ֆրանկ	36 > 90 >
Ուկի	7 > 471/2 >
Մադրասի կուպոններ	149 > 50 >
Արծաթ	— > — >
Բորային գիւղիւն	5 > 7 >
Պետ. բանկի 5/0 տոմս 1 շրջանի	— > — >
— — — — — 2-րդ	— > — >
— — — — — 3-րդ	— > — >
40/0 պետական ռենտա	— > 941/4 >
50/0 օսկեայ ռենտա 1884 թ.	— > 159 >
41/2 օսկեայ փոխառութիւն	— > — >
Արեւելեան 5/0 փոխառ. 1-ին շրջ.	— > — >
— — — — — 2-րդ	— > — >
— — — — — 3-րդ	— > — >
Ներքին 50/0 առաջին փոխառութիւն. 239 > >	
— — — — — 2-րդ	227 > 25 >
Պետական երկաթուղային ռենտա. 102 > >	
41/2 ռենտա	— > — >
40/0 ներքին փոխառութեան	— > 953/8 >
50/0 գրաւ. թղթ. ագն. կալ. բանկի	— > — >
Ագն. կալ. Պետ. բանկի խաղարկութիւն.	— > — >
Գրաւ. թղթ.	— > — >
41/2 օ/0 վկայակ. գիւղ. հող. բանկի. 102 > >	
41/2 օ/0 գրաւական թղթեր կալուած.	— > — >
փոխ. կրեդիտ. ընկեր. մետաղ. . 152 > >	
— — — — — թղթադ.	— > — >
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրիւնդաները. 1007/8 > >	
Մոսկովայի քաղաք. օրիւնդաները. 1017/8 > >	
Օդէսայի	101 > >
Թիֆլիսի	— > — >
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	— > — >
— — — — — Գրաւ. թղթ.	— > — >
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը խաղաղ է:	

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔԱՆՈՎԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ
ՀԻՌԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 Ժ. վիրաբուժութեան և վնասէրական (սիֆիլիս) հիւանդութիւններ:

Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 Ժ. աչքի և նեար-դային:

Կ. Գ. ԲՈՒԿՈՎԱՍԻ—10—11 Ժ. ներքին, երե-խաների և կանանց:

Ա. Գ. ԳՈՐԻՊՈ—1—11/2 Ժ. ակունքի, կոկորդի, և քթի.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—121/2—1 Ժ. կանանց ց. Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—11/2 ներքին և երե-խայց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՐԻՊՈ—6—7 Ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների:

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—7—71/2 Ժ. Ի. Ե. ՖԱՆՆՅՈՒՍ—7—71/2 ակունքի, կոկորդի և քթի ու նեարդային: Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՐԻՊՈ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խիւի, ա-րեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցում ընդունվում են և ԳԻՇԵՐՈՒԹԻՅ ՀԻՐԱՆԴԱՆՈՑ:

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Ժ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ: (№ 72)

Հ. ԱՌԵՏԻՔ ԿՈՑԱԽԻ

ԳԵՐՄԱՆՆԵՐԵՆ-ՀԱՅՆԵՐԵՆ
ԲԱՌԳԻՐԲԸ


1667 էջ. գիրք 10 ր.

Ծախվում է 5 րուբլիով, խուզադէրձանի մագաղկում, Գոյովնիսկի պրոսպէկտի վրա: (№ 91) 4—10


ՄԻ ՀՅՄԱՐԱՆԱԻՐՏ ՈՒՍՈՒՑԻՉ ՈւՂՈՒՄ
է դասեր ունենալ կրօնից, հայերէնից, թուրքերէնից, ձայնագրութիւնից կամ երգեցողութիւնից:

Դիմել «Տարադի» խմբագրութեանը Ժա-մի 10-ից մինչև 1-ը: 2—3


ԱՄԵՆԱՅԱՅՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒՌԱԿՆԵՐ: ԿԻ-ԹԱՌՆԵՐ, ՖԻԼԵՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՋԱՅՆԱ-ԽԱՅՆԵՐ, ԼԱՐՆԵՐ ԵՒ ԱՅԼՆԵՐ, ԵՒ ԱՅԼՆԵՐ:



Բոլոր տեսակ գործիքների համար գի-նը կարելի է վճարել մաս-մաս:

ՆՈՐ-ՊՐԵՑՍԱԿՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի: ԵՐԱՇԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՐՆԵՐԻ ԵՒ ՋԱՅՆԱԽԱ-ՋՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ:

ԴԵՊՈ

Բ. Մ. ՄԻՐԻՍՏԱՆԵԱՆԻ

Մատակարար կայսերական եւրոպական ընկերութեան

Տիֆլիս, Музыкальное депо Б. М. Мир-машана, Дворцовая ул., д. Т. Д. З. Ванка. (№ 35) 11—20

ԳՕՐԻ ԲԱՂԱԲՈՒՄ

ԿԱՐԱՄՈՒՐԶԱՅԻ ԿՕՆՏԵՐՏԸ

Տեղի կունենայ շաբաթ օր, օգոստոսի 27-ին, Չմերային կլուբում: Խուճը բաղկա-ցած է 36 տղամարդուց և 34 կանանցից: Տոմսակները ծախվում են ԳՕՐԻ, ԴՕՆԴԱՐՈՎԻ մագաղկում:

1—2

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՕՆՏԱՏՈՐԻԱՅԻ ատենի մէջ նշանակ-ված է աճուրդ 2-ին սեպտեմբերի սոյն ամսի, առանց կրկնաձուրդի, վարձով տալու համար Էջմիածնապատկան մի կրպակի Բաղաղխանայի, 5-րդ քաղաքամասում:

Անդամ կոնստատորիայի՝ Համագաղա վարդապետ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթու-թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական ճիշտութիւն, 2) Առևտ-րական թուրքերութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-յին), 4) Թուրքերութիւն համարչի վրա, 5) Առևտրական թղթագրութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղարութիւն, վատ ձեռքի ուղղիչը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլախիում, Ալեքսանդր Փրիլոնովի տանը, № 9, Սերգիեյեւկայա և Նազարյայա փողոցների անկիւնում: Մրադիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Մովսիսեանների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисть, С. П. Мануэляну.

№ 62

23—32

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՄ

Դեղերի, մարթին դեղեկացնող և հոտաւետ, նոյնպէս և առող-ջապահական նիւթերի և անտեսական գործիքների, բացված է Կուկիայում, ՎՕՐՈՆԳՈՎԻ արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ: (№ 67) 98—100 (ե. շ.)

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը ձեռնարկելով բանա-լու թիֆլիսում ընկերութեան

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

որի մէջ պէտք է մտնեն բոլոր լոյս տեսած հայերէն գրքերը և լրագիրները, նոյն-պէս և ուրիշ ընդունելով տպագրված ընտիր երկաթիւթիւթներ՝ կովկասագիտութեան և արեւելագիտութեան վերաբերեալ, սրանով դիմում է այն անձանց, որոնք կը ցանկա-նային իրանց մատենադարանները նուիրել կամ վաճառել ընկերութեան՝ բարեհաճին գրքերի ցուցակները և իրանց պայմաններն ուղարկել ընկերութեան խորհրդին մինչև օգոստոսի 30-ը: (№ 89) 5—5

Ազգիս վեհապետ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական զարոյցներում, որպէս ձեռնարկ, իմ աշխատասիրած

ՀԱՄԱՌՈՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱ-ԳԻՐԲԸ

Յայտնելով այս ի գիտութիւն զարոյցական վարչութեանը՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ՝ դիմել ուղղակի մեզ այս հասցեով. ԹԻՖԼԻՍ, Երկաւէտեան փողոց, տուն № 45: Գիրքը կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յի-սուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) զարոյցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճա-րել 40 կ.: ճանապարհամասը գնողների վրա է:

10—25 (№ 81)


Մարգիս քահանայ Բեգնազարեանց

НЪМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՑ» անվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմերներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նոմերների զինը 50 կոպէկից մինչև 3 րուբլի օրական, անկողնով և ծառայով:

Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն «Մշակ» և «Նոր-Դար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ բէստօրան, տեղեֆոն, քաղցրե-ղէնների խանութ, բաղնիքներ:

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում: (№ 21) 96—130 (շ.)



ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒԹԻՒՄ ԴԵՍ

«Ольфакториумъ Нудилинъ» բժշկական գէպարտամէտից թույլա-տրված Մ. Л. ЖИРМУНСКАГО. ՕԼԿԱԿՏՈՐԻՈՒՄ ՆՈՂԻ-ԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագոյ ծախան Ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլի-սում: № 128 (91 թ.) 30—40